ՄԱՅՐ ԱԹՈՌ

Ամառուայ ամիսներում Մայր Աթոռ հիւր են եկել բաւականաչափ անձինք, թէ անհատներ և թէ խմբերով։ Դպրոցական սաներից յատկապէս պէտք է յիշել Նոր Նախիջևանի թեմական դպրանոցի Ե. Զ. դասարանների աշակերտները, որոնք թուով 14 հոգի պ. պ. Յովհաննէս Ղարիբեանի և Աստուածատուր Աղէքեանի առաջնորդութեամբ դուրս էին եկել Անդրկովկասեան վայրերից մի քանիսն այցելելու։ Էջմիածին եկան յուլիս 18-ին ու տեսնելով տեղիս հնութիւններն ու հետաքրքիր վայրերը անցան Անի։

Նոյն ամսի 16-ին էքսկուրսանտների մի միջազգային խումբ, հայերից, վրացիներից և ռուսներից Անիից Էջմիածին է գալիս։

Բայց էքսկուրսանտների մէջ ամենից հետաքրքիր էր Շվեցարացի ալպինիստների խումբը, որ օգոստոսի կէսին գալով Արարատեան դաշտը, նպատակ էր դրել Մեծ Մասիսի գագաթը բարձրանալ։ Նոքա հրաւիրում են նաև Մեսրոբ եպիսկոպոս Տէր Մովսիսեանցին ու օգոստոսի 17-ին ամենայն յաջողութեամբ գլուխ են բերում իրանց մտադրութիւնը։ «Արարատ»-ի յաջորդ համարում Տ. Մեսրոբ եպիսկոպոսը իր նշանաւոր վերելքի մասին մի յօդուած կըտայ։

«Արարատ» ամսագրի յարգելի խմբագրութեան

Նորին Սրբութիւն Գէորգ Ե-րդ Վեհափառ Հայրապետը նախ քան ս. Օծումը բարեհաճեց իր եպիսկոպոսական գգեստները նուիրել Մայր Տաճար-ին ի գործադրութիւն։

Յայտնելով Նորին Սրբութեան իմ որդիական շնորհակալիքս, խնդրում եմ «Արարատ»-ի առաջիկայ համարում զետեղել գրութիւնս յիշեալ նուէրների մասին, որոնք հետևեալներն են.